

ԱՐԵՎՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՀՈՍՔ
Ուրբաթ, 14 Օգոստոսի, 2009

Փոքրիկ Հայաստանում լոյս տեսնող «Ասպարեզ» օրաթերթը, թեև ակոխելով իր հիմնադրման 100-ամեակը, սօնում է 101-րդ տարեդարձը: Այդ առիթով, թերթը Օգոստոսի 14-ի համարում հրատարակել է իր երեք նախկին խմբագիրների՝ Քրիստափոր Բագրատունու, Ժան Գոսաքեանի եւ Վաչէ Բրուտեանի խորհրդածությունները 101-րդ տարեդարձի կապակցությամբ: Իսկ թերթի ներկայիս խմբագիր Աբո Պողիկեանը գրել է, թե,- մեջբերում ենք,- ««Ասպարեզ» հարիւր տարին բոլորեց, հարիւրմեկերորդ տարեդարձն ալ այսօր կը նշէ՝ երկիւղածությամբ խոնարհելով անցեալի ու ներկայի իր բոլոր աշխատողներուն առջեւ, գնահատելով անոնց զոհաբերութիւնը, անոնց արժանապատուօրէն տարած աշխատանքը, անոնց համեստութիւնը»:

* * *

Յուլիս 25ին, Հովիվուդի Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչները մասնակցել են Փոքրիկ Հայաստան քաղաքին մերձակայ Թայ (Թայլանդ) շրջանի իններորդ ամենամեայ փառատօնին, որը կազմակերպուել էր Թայ համայնքի զարգացման կենտրոնի կողմից: Հայ Դատի յանձնախմբի ներկայացուցիչների կողքին, փառատօնին իրենց մասնակցությունն են բերել նաև Հայ Օգնութեան Միութեան Հովիվուդի մասնաճիւղի անդամուհիները՝ թարգմանական ծառայություններ տրամադրելով փառատօնը այցելող հայ քաղաքացիներին, որպէսզի նրանք կարողանային կապ հաստատել փառատօնին մասնակցած աւելի քան 40 համայնքային առողջապահական եւ ընկերային ծառայությունների եւ կազմակերպությունների հետ: Հովիվուդի Հայ Դատի յանձնախմբի ատենապետ Փօլ Սերատարեանը յայտնել է, թէ փառատօնը առիթ է հանդիսացել աւելի մօտից ծանօթանալու շրջանում գործող բազմաթիւ համայնքային կազմակերպությունների գործունէութեանն ու նրանց անդամներին, որոնց բոլորի նպատակն է բարելաւել շրջանի բնակչութեան իրավիճակը: Փառատօնի կազմակերպիչ յանձնախմբի ղեկավար Ֆիլ Վէնգը եւս ողջունել է հայկական կազմակերպությունների մասնակցությունը, որի շնորհիւ այս տարի շատ աւելի մեծ թուով հայեր են ներկայ եղել փառատօնին: Մասնաւորաբար նա դրուատել է Հովիվուդի Հայ Դատի յանձնախմբի դերակատարությունը շրջանում:

* * *

Երկուշաբթի Օգոստոսի 10-ին, Լաս Վեգասում, Դանի Թարքանեանը, որը բասկետբոլի հանրայայտ մարզիչ Ջերի Թարքանեանի որդին է, պաշտօնապէս յայտարարել է, թէ իր թեկնածությունն է առաջադրել Միացեալ Նահանգների Սենատի առաջիկայ ընտրություններում՝ Նեւադայի նահանգից: Հանրապետական կուսակցութեան անդամ Դանին ընտրապայքար է մղելու Միացեալ Նահանգների Սենատի խօսնակ, դեմոկրատական Հէրի Ռիդի դէմ: Ինչպէս նշում է, Դանին նոր է մուտք գործում քաղաքական ասպարեզ: Նախապէս նա եղել է բասկետբոլի մարզիչ: Հայրը՝ Ջերին, այս տարի այցելեց Հայաստան: Յայտնի մարզիչը վերադարձին ենթարկուեց վիրահատութեան եւ ներկայումս ապաքինման շրջան է անցկացնում: Դանի Թարքանեանի ընտրարշաւի մասին յաւելեալ տեղեկություններ ստանալու համար, կարելի է այցելել իր կայքէջը՝ www.dannytarkanian.org, հասցեով:

* * *

Վերջերս UCLA համալսարանում բազմաթիւ բարեկամների մասնակցությամբ տեղի է ունեցել հրաժեշտի հանդիսաւոր արարողութիւն ի պատիւ համալսարանի վաստակաշատ գրադարանապետուհի Ծիա Այվազեանի, որ երկարամեայ աշխատանքից յետոյ անցել է կենսաթոշակի: Ծիա Այվազեանը իբրեւ հայկական եւ յունական բաժինների գրադարանապետուհի, աւելի քան

քառասուն տարի իր ներդրումն է ունեցել UCLA-ի գրադարանի գիտահետազոտական բաժնում:
Հրաժեշտի հաւաքոյթը կազմակերպուել էր Ծիա Այվազեանի գործակիցների եւ գրադարանի
բարեկամների կողմից:

* * *

Լոս Անջելոսում գործող Հայ իրաւաբանների միութիւնը (Armenian Bar Association) յայտնել է, թէ այս
տարի կրթանպաստներ է յանձնել երեք հայ ուսանողների, ովքեր յաճախում են եւ կամ յաճախելու են
իրաւաբանական համալսարաններ: Այս տարուայ կրթանպաստները կստանան Նաթալի
Մարտիրոսեանը՝ Լոս Անջելոսի UCLA համալսարանից, Գարիկ Նահապետեանը՝ Լոս Անջելոսի
մերձակայ Ըրվայն քաղաքի UCI համալսարանից եւ Աստղիկ Սոլոմոնեանը՝ Երեւանի պետական
համալսարանից: Հայ իրաւաբանների միութեան կրթանպաստ ստանալու գլխաւոր պայմաններից է, որ
բարձր գնահատականների կողքին, թկնածուները ապացուցեն, որ իրենց գործուն մասնակցութիւնն են
բերում հայկական համայնքում, նախընտրաբար մարդասիրական կամ իրաւաբանական
բնագաւառներում:

* * *

Ամերիկաբնակ թուրքերը մի նոր արշաւ են ձեռնարկել, փորձելով ճնշում բանեցնել համացանցային
որոնման հզօրագոյն շարժիչը նկատուող «Գուգլը» ընկերութեան վրայ, ոպրէսզի այն միանայ Հայոց
Ցեղասպանութիւնը ուրացողների շարքին: Թուրքական այս արշաւը ձեռնարկուել է ի պատասխան
«Գուգլը»ի «Վատ մի՛ լինիր» նշանաբանի, որի տրամաբանութիւնից մեկնելով՝ ընկերութիւնը որոշել է
արգելել թուրքական կազմակերպութիւնների կողմից տեղադրուած ծանուցումները, որոնք
այցելուների ուշադրութիւնը շեղում են Հայոց Ցեղասպանութիւնը ուրացող կայքէջերի վրայ:
Անդրադառնալով սոյն իրադարձութեանը Ամերիկայի Հայ Դատի յանձնախմբի վարիչ տնօրէն Արամ
Համբարեանն ասել է, թէ «մենք գնահատում ենք «ԳուԳըլ»ի որոշումը եւ յարգում ենք «Վատ մի՛ լինիր»
նշանաբանով ղեկավարուող սուտ ու յերիւրանք տարածող ծանուցումները դադրեցնելու «ԳուԳըլ»ի
կեցուածքը»: Նշենք, որ «Գուգըլ»ը այս որոշումը ընդունել է 2009ի Յունիսին, երբ ստանալով
ամերիկահայերի եւ մարդու իրաւունքների ջատագովների կողմից գրուած հազարաւոր բողոքի
նամակները՝ վերատեսութեան ենթարկեց իր ծանուցումների քաղաքականութիւնը:

Այս լուրերը տրամադրուած են
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: